

**ԲԱՐԲԱՌԱԳԵՏ ԱԼԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻ ՀՈԴՎԱԾԻ ՇՈՒՐՁ
(ծննդյան 70-ամյակի առիթով)**

Վերջերս լրացավ վաղամեռիկ բարբառագետ Ա.Խաչատրյանի ծննդյան 70-ամյակը: Մեծ էր երիտասարդ բարբառագետի հետաքրքրությունների շրջանակը, բայց հատկապես արժեքավոր են նրա նուրբ ու դիպուկ դիտարկումները բարբառագիտության բնագավառում: Իր կարճատև կյանքում նա հասցրեց շատ բան անել հայ բարբառագիտության անցնելիք ճանապարհին ուղենշելու համար:

«Աճառյանը և հայ բարբառագիտությունը» թեկնածուական թեզով Ա.Խաչատրյանը ըստ ամենայնի քննության է առել հայ մեծագույն լեզվաբան և բարբառագետ Հ.Աճառյանի բարբառագիտական ժառանգությունը՝ կարևորել նրա տեղն ու դերը բարբառագիտության իբրև առանձին գիտակարգի կայացման գործում:

Հայտնի է, որ հայ բարբառների խոսվածքային տարբեր միավորների մենագրական քննության եղանակը շուրջ 100 տարի եղել է հայ բարբառների ուսումնասիրության ամենահիմնական ուղին և իր նշանակությունը չի կորցրել նաև բարբառագիտության զարգացման արդի փուլում: Այդ մենագրությունների կարևորությունն ու անհրաժեշտությունն ըստ ամենայնի արժևորում է բարբառագետ Ալբերտ Խաչատրյանն իր **«Հնչյունաբանության ուսումնասիրության սկզբունքները հայ բարբառագիտական աշխատություններում»** ծրագրային ծավալուն հոդվածում¹: Նա վստահ է, որ բարբառներին նվիրված մենագրությունները լավագույն միջոց են խորությամբ ներկայացնելու տվյալ բարբառի հնչյունաքերականական բոլոր առանձնահատկությունները՝ խոսվածքների իրական պատկերը ներկայացնելով նաև բանահյուսական նյութերով: Հայերենի բարբառներին նվիրված մի քանի տասնյակ մենագրություններն ակնհայտորեն գրված են 20-րդ դարասկզբին Հ.Աճառյանի մշակած ու գործադրած կայուն սկզբունքներով: Ճիշտ նույն կաղապարով գրված լինելով՝ այդ բոլոր մենագրություններում առկա են Աճառյանի բարբառագիտական ուսումնասիրություններին բնորոշ նկատելի մի բացթողում, ինչպես հոդվածագիրն է նշում՝ «Առկա են պատմահամեմատական մեթոդի ամենահիմնական տարրի՝ **համեմատության** անտեսման մասին վկայող փաստեր»²:

Իր այս ծրագրային հոդվածում Ա.Խաչատրյանը թվարկում է մի շարք թերություններ, որոնք բնորոշ են բարբառների՝ ավանդական սկզբունքով իրականացված ուսումնասիրություններին: Դրանցից են՝

Ա) Հնչյունափոխական իրողություններին առնչվող նկատելի թերություններ:

Նշենք դրանցից մի քանիսը.

1. Ուսումնասիրվող բարբառների նկարագրության մեջ մանրամասնորեն ներկայացվում են գրաբարյան բոլոր հնչյունները՝ հավասարապես կարևորելով ինչպես համակարգային փոփոխության ենթարկվող, այնպես էլ մասնավոր կամ բոլորովին չփոփոխվող հնչյունները՝ այդ ձևով ավելորդաբանություններով ծանրաբեռնելով ուսումնասիրությունը:
2. Առավել ևս մերժելի իրողություն է հնչյունների՝ բառի մեջ ունեցած բոլոր դիրքերը ներկայացնելը՝ առանց կարևորության աստիճանի հաշվառման:

¹ Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 2*, Ե., 1985, էջ 91:

² Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 1*, Ե., 1982, էջ 74:

Բերվում են բառակազմում *փ, ք, թ, ց, չ* բաղաձայնների անհնչունափոխ լինելն ապացուցող բազմաթիվ օրինակներ: Ընդ որում՝ այդ երևույթն առկա է բոլոր ուսումնասիրություններում:

Կամ, ասենք, թեև հանրահայտ է պայթականների և կիսաշփականների փոփոխությունների համակարգային լինելը, այնուամենայնիվ, նախկին ուսումնասիրություններում այդ կարգի հնչյուններից յուրաքանչյուրը քննության է առնվում մյուսներից անջատ:

3. Քննադատելի է նաև Աճառյանի օրենքին ենթարկվող բարբառներում *ա* հնչյունի քմայնացումը *ա* կամ *առ* հնչյունների քմայնացման հետ չկապելու հանգամանքը, ինչն ակնբախ է նաև հետագայում գրված բարբառագիտական մենագրություններում:
4. Նույնպիսի ավելորդաբանություն է շեշտից կախված հնչունափոխությանն առնչվող երևույթը նկարագրելիս նույն դիրքում գտնվող տարբեր ձայնավորներն առանձին-առանձին քննության առնելու կարգը:
5. Ավելորդաբանության արժեքով է ներկայանում նաև դիրքային տարբերակները ոչ միայն համապատասխան հնչյուններին վերաբերող մասում, այլ նաև առանձին վերնագրերի տակ քննության առնելը, նաև գրաբար-բարբառ բառացանկում ընդգրկելը և այլն:

Ավելորդաբանությունների նմանօրինակ բազմաթիվ իրողություններ թվարկելով՝ Ալբերտ Խաչատրյանը եզրակացնում է. «Կարծում ենք՝ բարբառագիտության շահերը պահանջում են լեզվաբանական գիտության և մասնավորապես՝ հայերենագիտության զարգացման արդի մակարդակին համապատասխան վերանայել ու կատարելագործել բարբառների հնչունաբանության քննության ավանդական սկզբունքները»³:

Բ) Հաջորդ հարցը, որի վրա հատուկ ուշադրություն է հրավիրում Ա.Խաչատրյանը, վերաբերում է *անկանոն հնչունափոխություններին*:

Ինչպես հայտնի է, բարբառագիտական բոլոր մենագրություններում տվյալ բարբառի համար օրինաչափ հնչունափոխական խնդիրների քննությանը հաջորդում է դրանցից շեղվող անկանոն կամ մասնակի դեպքերի քննությունը: Հենց այդ հարցին էլ, ինչպես նշում է բարբառագետը, հարկ է հատուկ ուշադրություն դարձնել, քանի որ հնչունափոխական անկանոնությունները չափազանց կարևոր են լեզվի պատմության հնագույն շերտերը, բարբառային հին երևույթները վերհանելու առումով և լեզվի արխաիկ գծերը բացահայտելու համար: Անդրադառնալով այդ հարցում մենագրությունների հեղինակների անփութությանը՝ Խաչատրյանը գրում է. «Ի մի հավաքելով ավելի քան 3 տասնյակ բարբառագիտական մենագրություններում հնչունափոխական անկանոնություններ համարվող օրինակները՝ նկատում ենք, որ դրանց զգալի մասը ընդհանուր համապատասխանություններից շեղում է դիտվել համեմատության եզրերը ճիշտ չընտրելու պատճառով»⁴:

Ըստ հեղինակի՝ բարբառագիտական մենագրությունների հեղինակների կողմից շատ դեպքերում որպես գրաբարյան են ներկայացվում հին շրջանից ավանդված կրկնակ բառաձևերից նրանք, որոնք առավել տարածված են և ընտիր: Այդ

³ Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 2*, Ե., 1985, էջ 91:

⁴ Տե՛ս *նույն տեղում*, էջ 95:

առումով հողվածագիրը օրինակ է բերում *թոռովել-թառամել* գուգաձևությունը: Այսպես՝ Մալաթիայի բարբառի ուսումնասիրության մեջ *թառամել*-ը առավել օրինաչափ համարելով՝ ուսումնասիրության հեղինակն այդ բառում *ա-օ* ոչ օրինաչափ հնչյունափոխություն է փաստում: Խաչատրյանն իր հողվածում համոզիչ կերպով փաստում է, որ վերոհիշյալ բարբառի ուսումնասիրության մեջ *թառամիլ>թոռովիլ* բառաձևերը ներկայացնելիս «թույլ է տրված հնչյունական փոփոխությունների ժամանակագրության կոպիտ խախտում, քանի որ հայերենի զարգացման պատմական (գրային) շրջանին է վերագրվում հնչյունների հերթագայության այնպիսի երևույթ, որ վերաբերում է մեր լեզվի նախապատմական շրջանին»⁵: Իբրև կողմնորոշման միջոց՝ հողվածագիրը բերում է Հ.Աճառյանի վկայությունն Արմատական բառարանում այն մասին, որ *թոռով*-ը *թառամ*-ի՝ հնդեվրոպական շրջանից եկող բարձր ձայնդարձի արտահայտություն է:

* Նմանատիպ մի օրինակ էլ հունարենից փոխառյալ *կիրակե* բառանվանումն է՝ 5-րդ դարից ավանդված 2 ձևով՝ *կիրակե* և *կիրակե*: Մեր բարբառագիտական երկերում (գրեթե առանց բացառության) որպես սկզբնաձև է ընդունվում ոչ թե *կիրակե*-ն, այլ *կիրակե*-ն՝ որպես անկանոն հնչյունափոխություն որակելով *իւ>ի* անցումը այդ բարբառներում: Մինչդեռ Խաչատրյանը համոզմունք է հայտնում, թե <արդի բոլոր բարբառների համապատասխան տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց նախաձևը կարող էր լինել միայն *կիրակե*-ն (և հետագայում դրանից ծագած *կիրակի*-ն, որ հանդիպում ուշ շրջանի մատենագրության մեջ), բայց ոչ *կիրակե*-ն: Ճիշտ է, *կիրակե*-ն *կիրակե*-ի համեմատությամբ վերջին հաշվով բարբառային կամ ժողովրդախոսակցական ձև է, բայց դա վերաբերում է արդեն իսկ 5-րդ դարին և ոչ թե աշխարհաբարին»⁶:

* Խաչատրյանի հողվածում ներկայացվում են այդ մենագրություններում առկա նաև այլ բնույթի սխալներ: Ասենք, *երախայ* և *երեխայ* ձևերից թեև հնագույնը առաջինն է, սակայն մենագրություններից շատերում *յերախա-արախա-ըրախա* ձևերում արմատական ձայնավորի պահպանումը արհեստականորեն դիտվել է որպես *ե>ա* մասնակի հնչյունափոխության արդյունք:

* Հողվածագիրը կարծիք է հայտնում, որ, իհարկե, հին շրջանից եկող գրավոր վկայությունների բացակայության պայմաններում ոչ միշտ է հնարավոր հաստատապես խոսել այս կամ այն մասնակի հնչյունափոխության հին լինելու մասին: Բայց կան որոշ չափանիշներ, որոնց հետևողական գործադրումը ընձեռում է նմանատիպ հնարավորություն, և դրանցից ամենավստահելին մյուս բարբառների համապատասխան տվյալների հետ համեմատությունն է: Եթե պարզվում է, որ տվյալ իրողությունն ընդհանուր է հայերենի բազմաթիվ բարբառների համար, ապա այն կարելի է հին համարել: Իսկ եթե հատկանիշը գրեթե համատարած է, ապա ճիշտը այն համահայերենյան իրողություն համարելն է: Օրինակ՝ գրաբարի *ալևոր*, *արբել*, *եղբայր*, *ոսկր* բառերի դիմաց արդի բարբառները (չնչին բացառությամբ) երևան են հանում *հալևոր*, *հարբել*, *աղբայր*, *ոսկոր* նախաձևերը: Ըստ Խաչատրյանի՝ տրամաբանական է կարծել, որ դրանք առաջացել են այն ժամանակ, երբ հայերենը համեմատաբար միասնական էր՝ 10-րդ դարից առաջ: Ընդ որում, առաջին 3 բառերի

⁵ Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլաս*, պրակ 2, Ե., 1985, էջ 97:

⁶ Տե՛ս *նույն տեղում*, էջ 98:

խոր հնության մասին մենագրությունների հեղինակները համակարծիք են՝ դրանք համարելով հին հայերենի ժողովրդախոսակցական տարբերակի ձևեր: Իսկ վերջին բառի առիթով հողվածագիրը հետաքրքիր դիտարկում է անում՝ ասելով հետևյալը. «*Ոսկոր-ը ոսկր-ի* համեմատությամբ նորաբանություն է՝ առաջացած լիաձայնության ու առնմանության օրենքներով, հին հայերենի վերջին փուլում: Միայն Ղարաբաղի բարբառն է երևան հանում ավելի հին վիճակ, քան ոսկր-ը»⁷:

* Հողվածում կարևորվում է այն դրույթը, որ համահայերենյան բնույթ կրող հնչյունափոխական իրողությունները տարբեր մենագրություններում ներկայացնում են որպես տվյալ բարբառին հատուկ երևույթ, իսկ դա ապացուցելու համար հաճախ անհաջող փորձեր են արվում տվյալ բարբառին վերագրելու որոշ անկանոնություններ: Այս հարցում հողվածի հեղինակի կարծիքն այն է, որ եթե շեղումն առկա է պատմականորեն սերտ տարածք կազմող մի շարք բարբառներում, ապա այն պետք է համարել միայն տվյալ տարածքին հատուկ հին բարբառային իրողություն, իսկ եթե այն հանդիպում է զանազան տարածքներ ընդգրկող տարբեր բարբառներում, ապա նրա՝ հին հայերենի բարբառային փաստ լինելու վարկածն ավելի է հաստատվում: Այդ առիթով բարբառագետը բերում է համապատասխան օրինակներ: Այսպես, *աստուած* բառի դիմաց արևելյան մի շարք բարբառներ ունեն *աստոծ* ձևը, որը պետք է համարել այդ տարածքի (Արցախ, Սյունիք) հին բարբառային երևույթ: Իսկ ասենք *թրջել* բառի դիմաց առկա *դրջել*-ը, որ կա Արարատյան, Սուչավայի, Խարբերդի, Ջուղայի, Թիֆլիսի, Խոյ-Մարաղայի, Հաճնի բարբառներում, պետք է համարել *հինհայերենյան* (տարբեր բարբառներին բնորոշ) հատկանիշ:

Հողվածագիրը նշում է, որ բարբառային հնաբանությունների հարցը Հ.Աճառյանն իր մենագրություններում առաջադրել և հաջողությամբ կիրառել է՝ համեմատելով փոխատու և ցեղակից հնդեվրոպական լեզուների տվյալների համեմատությամբ, սակայն իր ուսումնասիրության ոլորտն է ընդգրկել բարբառային հայտնի տվյալների մի որոշ մասը միայն և ոչ միշտ է անհրաժեշտ հետևողականություն ցուցաբերել դրանց մեջ»⁸:

Այս աշխատանքում Խաչատրյանը բարբառային հնաբանությունների ուսումնասիրությունների հարցում հետաքրքիր ձևով հակադրում է ամենաճանաչված երկու բարբառագետների՝ Հ.Աճառյանին և Ա.Ղարիբյանին: Աճառյանը մեծ զգուշավորություն է հանդես բերում նմանօրինակ պատասխանատու հարցում որոշակի կարծիք ներկայացնելու ժամանակ՝ պատճառաբանելով, որ հնագույն հուշարձանները մեզ են հասել ուշ շրջանի գրչություններով: Այս առիթով օրինակ է բերում *կրեայ* բառը՝ հին շրջանից հասած *կրայ, կրիայ, կիրայ* և արդի բարբառներում գործառող 18 -ից ավելի բառանվանումներով: Աճառյանը գտնում է որ բոլորն էլ սերում են ձևափոխված են *կրեայ* բառից սերած է համարում բոլոր ձևերը: Ըստ Խաչատրյանի՝ «հին հայերենում բարբառային տարբերությունների գոյությունն ընդունելու դեպքում տրամաբանական կլիներ այդ գրչությունների մի մասը համարել բարբառային հին իրողություններ, իսկ արևելյան մի շարք բարբառներում առկա *կուրյա, կուրա, կուրի, կուրայի* և այլ ձևերը՝ գրաբարյան

⁷ Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 2*, Ե., 1985, էջ 114:

⁸ Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 2*, Ե., 1985, էջ 114:

բառաձևերի համեմատությամբ ավելի հին վիճակի արտահայտություններ, քանի որ դրանցում պահպանված է *ու* արմատական ձայնավորը(չի բացառվում *կուր* արմատին զուգահեռ՝ *կիր*-ի գոյությունը)⁹: Նպատակաուղղված ուսումնասիրության դեպքում Աճառյանը, մի կողմ դնելով զգուշավորությունը, բարբառային հնաբանություններ կհամարեր դրանք:

Իսկ Ա.Ղարիբյանն ընդհակառակը, չի խուսափում իր աշխատություններում կանխակալ կարծիք հայտնել, ինչպես, ասենք, վարվել է նորախայտ բարբառներից մեկի՝ Արամոյի բարբառի երկար ձայնավորները հնդեվրոպական նախալեզվից սերող իրողություն համարելով: Խաչատրյանը գտնում է, որ առանց լուրջ ուսումնասիրության և բազմապիսի օրինակների նման կանխակալ կարծիք հայտնելը ծայրահեղություն է և գալիս է արդի բարբառներին հատուկ իրողություններին խոր հնություն վերագրալու մղումից, թեկուզ և գրաբարի հենքի վրա է քննում բարբառներում առկա հնչյունափոխության իրողությունները:

Ավելորդ զգուշավորության կամ կանխակալ կարծիքի փոխարեն Խաչատրյանը լավագույն միջոց է համարում *համեմատությունը* մյուս բարբառների համապատասխան տվյալների հետ: Հատկանիշի հնության ցուցիչը տվյալ բարբառի և այլ բարբառների համեմատությունից ակնհայտ դարձող ընդհանրություններն են: Այդ առումով հայ բարբառագիտության մեջ կարևորագույն արժեք է ձեռք բերում ակադ. Գևորգ Ջահուկյանի «*Հայ բարբառագիտության ներածություն*» աշխատությունը (1972թ.), որի մեջ արդեն հստակորեն սահմանազատվում է հնչյունափոխությունն իր տարբեր դրսևորումներով, ինչպես՝ *պատմական* կամ *տարժամանակյա* հնչյունափոխությունը և *համաժամանակյա* կամ *շեշտից կախված* հնչյունափոխությունը, ինչպես նաև *դիրքային փոխազդեցական* հնչյունափոխության դեպքերը: Նմանատիպ հիմնարար ուսումնասիրությունը մեծապես նպաստեց, որ նոր շրջանի մասնագետ-բարբառագետներն իրենց մենագրություններում կիրառեն առավելագույն ընդհանրացման սկզբունքը: Հոդվածագրի կարծիքով՝ այդ սկզբունքի հետևողական գործադրման շնորհիվ աշխատանքները բեռնաթափվել են մեծ քանակությամբ օրինակների կրկնությունից: Ակնհայտ է, որ ուշ շրջանի ուսումնասիրողները խուսափել են բազմաթիվ մասնավոր կանոններից, հավելուրդայնությունից, որոնք անխուսափելի են ավանդական մեթոդով գրված աշխատություններում:

Ինչ վերաբերում է Ա. Խաչատրյանի՝ ծրագրային արժեք ունեցող այս ուսումնասիրությանը, կարելի է ասել, որ խորաթափանց բարբառագետն իր հետաքրքիր դիտարկումներով ուղենշում է բարբառագիտության զարգացման ճշմարիտ ուղին՝ առաջնորդվելով հայ բարբառների հետագա ուսումնասիրողներին ավանդական մեթոդի որոշ թերություններից զերծ պահելու ակնկալիքով:

⁹ Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 2, Ե.,1985, էջ 112: